Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Լիլիա Շուշանյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, 2019թ. սեպտեմբերի 16-ից 18-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Իրական սեփականատերերի բացահայտման Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության առաջավոր փորձի ուսումնասիրություն

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Քննարկվել են իրական սեփականատերերի/ազդեցություն ունեցող անձանց բացահայտման ոլորտում ՄԹ Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչության և Ընկերությունների պալատի պրակտիկան, ԱՃԹՆ ստանդարտի իրականացման գործընթացը ՄԹ-ում, իսկ «Օփեն Օուներշիփ» նախաձեռնության ներկայացուցիչների հետ՝ միջազգային հանրության ջանքերի համախմբման միտումները:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Սեպտեմբերի 16-ին հյուրընկալվել եմ Միացյալ Թագավորության կառավարության Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունում (BEIS Department): Կայացած աշխատաժողովի ժամանակ ՄԹ Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչությունից և Ընկերությունների պալատի կողմից ներկայացվել է Միացիալ Թագավորության ընկերությունների իրական սեփականատերերի ռեգիստր հիմնելու, իրավական կարգավորումների, ռեգիստրի վարման փորձը:

Աշխատաժողովի բրիտանացի մասնակիցները ներկայացրել են Ընկերությունների պալատի՝ նշանակալի ազդեցություն ունեցող անձանց՝ իրական սեփականատերերի ռեգիստրի վարման գործառույթները, իրավական կարգավորությունները, համագործակցությունն այլ պետական գործակալությունների և հասարակական կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ երկրների հետ համագործակցության շրջանակը: Ներկայացվեց տեղեկատվության հավաքագրման, տվյալները հանրության համար հասանելի դարձնելու, անձնական տվյալների պաշտպանության, իրական սեփականատերերի բացահայտման պահանջների կատարման իրավական կարգավորումները:

Հայաստանի պատվիրակությունն ուսումնասիրել է ՄԹ ռեգիտրի տեխնիկական բնութագրիչները, առցանց և թղթային տարբերակներով տվյալների ներկայացման գործընթացները, ներկայացված տվյալների ստուգման ներդրված պրակտիկան: Վարչության ներկայացուցիչները ներկայացրել են նաև ընթացիկ բարեփոխումները և ոլորտում սպասվող միջազգային զարգացումները:

Հանդիպում է կայացել նաև ՄԹ ԱՃԹՆ-ի պատասխանատուներ՝ Գործարարության, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության վարչության ներկայացուցիչ, ՄԹ ԱՃԹՆ-ի քարտուղարության քաղաքականության հարցերով խորհրդատու Մայք Նաշի և Նավթի և Գազի գործակալության գլխավոր տնտեսագետ և ֆիսկալ վերլուծաբան Մայք Էրփի հետ: Հայաստանյան պատվիրակության անդամները և Մեծ Բրիտանիայի ԱՃԹՆ-ի պատասխանատուները փոխանակվել են ԱՃԹՆ-ի ներդրման իրենց փորձով: Ներկայացվել է մինչ այժմ երկրների կողմից իրականացված ԱՃԹՆ-ի աշխատանքները, ԱՃԹՆ-ի վավերացման ԱՃԹՆ-ի փորձը, ինչպես նաև քննարկվեցին ԱՃԹՆ-ի նոր՝ ծրագրի մակարդակով հաշվետվողականության, տվյալների համակարգային բացահայտման և բնապահպանական հաշվետվողականության պահանջներ և երկրների՝ դրանց իրականացմանն ուղղված քայլերը:

Սեպտեմբերի 17-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) ներկայացուցիչներ Թոնու Բասուի,

Ադնա Կարամեհիկ-Օատեսի և ՄԹ Միացյալ հակակոռուպցիոն բաժնի քաղաքականության գլխավոր խորհրդատու Սելմա Ֆիշերի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին Հայաստանի կառավարության կողմից իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքները, առաջիկա գործողությունները և համագործակցության հեռանկարները: Բաց կառավարման գործընկերության ներկայացուցիչների հետ հանդիպմանը քննարկվեցին Հայաստանի մոտեցումները իրական սեփականատերերի գլոբալ ռեգիստր ստեղծելու վերաբերյալ, առաջարկություն եմ ներկայացրել ազգային ռեգիստրների համար առավել համապարփակ և մանրամասն տեխնիկական պահանջներով միասնական ձևաչափ ունենալու մասին, որը կնպաստի նույնական ռեգիստրների առկայությամբ միջազգային ցանցի ստեղծմանը:

Հանդիպում կայացավ նաև «Օփեն Օուներշիփ» իրական սեփականատերերի համաշխարհային ռեգիստրի Ծրագրերի և քաղաքականության գլխավոր ղեկավար Լուիս Ռասել-Պրիվատայի հետ, ով ներկայացրեց կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունները: Հանդիպման մասնակիցները քննարկեցին իրական սեփականատերերի ռեգիստրի ստեղծման և հանրության համար դրա հասանելիության ապահովման խնդիրները, ինչպես նաև, Օփեն Օուներշիփի կողմից Հայաստանին խորհրդատվական և տեխիկական աջակցություն տրամադրելու հնարավորությունները:

ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ԿԱՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հաշվի առնելով, որ այս տարի Օտտավայում կայացած Բաց կառավարման գործընկերություն նախաձեռնության համաժողովի ընթացքում Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի Առաջատար երկրների խումբ է ստեղծվել միասնական ձևաչափեր, մեթոդներ, խնդիրների հաղթահարման համալիր լուծումներ մշակելու նպատակով, իսկ Հայաստանն իր հաստատակամությունն է հայտնել բարձրացնելու թախանցիկությունը պետական կառավարման համակարգում, կառավարության գործունեությունն ավելի հաշվետու դարձնելու և լիարժեք իրականացնելու կոռուպցիայի դեմ պայքարը, ձեռք է բերվել պայմանավորվածություն մասնակցելու Առաջատար երկրների խմբի համար մշակվող ԻՍԲ ընդհանուր սկզբունքները ամրագրող փաստաթղթի նախագծի կազմման աշխատանքներին: Միաժամանակ, առաջարկվել է այդ նախագծում ամրագրել ԻՍԲ-ին առնչակցվող միջազգային առկա բոլոր հարթակների գույքագրման, վերջիններիս նպատակների և պահանջների համեմատության ու փոխադարձ օժանդակության հնարավորությունների, ինչպես նաև ԻՍԲ-ին ուղղված առկա ֆինանսական ֆոնդերի և օժանդակման այլ ձևերի բոլոր աղբյուրների գույքագրման անհրաժեշտությունը:

Լիլիա Շուշանյան

X _____

20.09.2019թ.